


Տուբերկուլոզի համաճարակաբանական իրավիճակը Հայաստանում

2012 թվականի ընթացքում

Ա.Օ.Հայրապետյան, Կ.Լ.Դավթյան, Հ.Լ.Դավթյան,

ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ

Տուբերկուլոզի հիվանդացության ցուցանիշը, 2006 թվականից սկսած, տարեց տարի նվազում է և 2012 թվականին այն կազմել է 37.1: 2007 թվականից արձանագրվում է նաև մահացության ցուցանիշի նվազում, որը 2012 թվականին կազմել է 2 (Նկար 1):



Նկար 1. ՏԲ հիվանդացության և մահացության ընթացաչաբժը /2002 – 2012 թթ./

2012 թվականին հաշվառման մեջ է գտնվել առաջնակի 1125 և կրկնակի 391 տուբերկուլոզով հիվանդ: Արձանագրված դեպքերի 74%-ը առաջնակի դեպքեր են, 26%-ը՝ կրկնակի: Առաջնակի հիվանդներից 58-ը 0-17 տարեկան երեխաներ են, որը կազմում է առաջնակի դեպքերի 5.2%-ը: Առաջնակի դեղազգայուն հիվանդներից 77%-ը (864-ը) կազմել է թոքային ձևերը:

Այսպիսով, ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին նկատվում է տուբերկուլոզի հիվանդացության և մահացության նվազում, սակայն դեռևս կան բարելավման կարիք ունեցող ցուցանիշներ, մասնավորապես՝ նոր քսուք դրական դեպքերի հայտնաբերման և բուժման արդյունավետությունը ցուցանիշը, ինչպես նաև բուժման ընդհատումների ցուցանիշը: Տուբերկուլոզի ցուցանիշների վրա բացասաբար է ազդում նաև հանրապետությունում առկա միգրացիայի ծավալը: Դեպքերի մի մասը հիվանդանում են արտերկրում և շատ անգամ արդեն բավական ծանր վիճակում վերադառնում Հայաստան: